## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շինարարական վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/79 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում արդյունքում 2025թ. օգոստոսի 29-ին կնքված N ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/79-3 ծածկագրով պայմանագրում (այսուհետ Պայմանագիր) 2026 թվականի ապրիլի 27-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ**. Կապալառուի կողմից ստացված գրության և պատասխանատու ստորաբաժանման համապատասխան զեկուցագրի հիման վրա՝ Պայմանագրի կատարման ժամկետի երկարացման անհրաժեշտություն և Կապալառուի անվանման փոփոխություն:

**Փոփոխության նկարագրություն**. Կատարված փոփոխությունների արդյունքում.

- Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի «Ժամկետը**» սյունակում նշված աշխատանքի կատարման ժամկետը 3-րդ չափաբաժնի մասով խմբագրվել է և ներկայացվել է նոր շարադասությամբ հետևյալ կերպ. «Կողմերի միջև կնքվող համաձայնագրի և համապատասխան տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 100 օրացուցային օրվա ընթացքում»:
- Պայմանագրի Հավելված N 2.3-ով ներկայացված «ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ»-ի և 20.02.2026թ. կնքված համաձայնագիր 1-ի Հավելված N 1.3-ով ներկայացված «ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ»-ի փոխարեն հաստատվել է համաձայն Համաձայնագիր 2-ի Հավելված N 1.1-ի:
- Պայմանագրում և Պայմանագրի շրջանակում կնքված N 1 համաձայնագրում Կապալառուի անվանումը խմբագրվել է և ներկայացվել է հետևյալ կերպ. «ԹՈՓ ԲԻԼԴ» ՍՊԸ:

**Փոփոխության հիմնավորում.** Հիմք ընդունելով Պայմանագրի 1.1, 8.5 և 8.8 կետի համաձայն, միաժամանակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ չի վերացել գնման պահանջը:

**Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ**